ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 52-27-63, ֆաքս 54-67-90, 56-12-51

2-09-16.17-4-18656

« Ձեր »- 292-ի 4, 11.08.2016թ. 2016 թ. №17-

Մուտք – 23242, 16.08.2016թ.

Ինֆորմացիայի ազատության
կենտրոն ՀԿ նախագահ
Լ.Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր գրության հայտնում եմ,

1.2. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1816-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանությունը բաղկացած է ճանապարհային ոստիկանության վարչական մասից և տարածքային՝ հաշվառման-քննական (բաժին, բաժանմունք, խումբ) ու ճանապարհապարեկային ծառայության շարային (գումարտակ, վաշտ, դասակ, ջոկ, խումբ) ստորաբաժանումներից: Ճանապարհային ոստիկանության վարչական մասը բաղկացած է կառուցվածքային և ենթակա ստորաբաժանումներից (բաժին, բաժանմունք, խումբ, վաշտ, դասակ, ջոկ): Նույն հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության վարչական մասի և տարածքային ստորաբաժանումների կառուցվածքն ու հաստիքացանկը հաստատում է ոստիկանության պետը: ՀՀ ոստիկանության պետի 2007 թվականի մայիսի 17-ի N 880-Ա հրամանի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնը, որպես ենթակա ստորաբաժանում (բաժնի կարգավիճակով) հանդիսանում է Ճանապարհային ոստիկանության վարչական մասի ստորաբաժանում:

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 29.02.2016թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը հաստատելու մասին» թիվ 1-Ն հրամանի՝ ՀՀ ոստիկանության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի ցուցակային կամ հաստիքային թվաքանակի վերաբերյալ տվյալները գաղտնագրված են, ուստի դրանք սահմանող վարչական ակտերի պատճեններ տրամադրել հնարավոր չէ:

3. Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչները և ավագ տեսուչները, որպես ենթակա ստորաբաժանման ծառայողներ, հանդիսանում են Ճանապարհային ոստիկանության վարչական մասի ստորաբաժանման ծառայողներ:

4. Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի գործունեությունը՝ ներառյալ տեխնիկական միջոցներով ապահովումը ֆինանսավորվում են Պետական բյուջեի և ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին:

5. Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի աշխատակացիները ֆինանսավորվում են Պետական բյուջեի և ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին:

6. Ճանապարհային ոստիկանության տեսանակարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի ծառայողների ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, իսկ նրանց նշանակումը կատարվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով, այլ ոչ թե աշխատանքային պայմանագրով:

Հարգանքով՝

Պետի պաշտոնակատար,
ոստիկանության գնդապետ ***Ե.Կարապետյան***